

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ

# ԿԱՆՈՆՆԵՐ

Մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն

Հաստատվել է Ընկերության խորհրդի  
կողմից 2008թ.-ի մարտի 3-ին  
(արձանագրություն թիվ 2)

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ  
Գործադիր տնօրեն՝  
Լևոն Ալթունյան

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### 1. Հիմնական դրույթներ

Ելնելով այս պայմանագրում և ցուցակում առկա դրույթներից, սահմանաբաժիններից, բացառություններից և այլ պայմաններից, և հաշվի առնելով Ապահովագրվողի վճարած կամ վճարելու ենթակա ապահովագրական պարզեր՝ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ապահովագրող») համաձայն է հատուցել Ապահովագրվողին (ոչ ավելի մեծ գումարի չափով, քան սահմանված է ցուցակում)՝

1.1 մինչև ցուցակում նշված սահմանաբաժնի չափը՝ ցանկացած գումարը կամ գումարները, որոնց վճարման համար Ապահովագրվողը կարող է կրել իրավական պատասխանատվություն՝ որպես վնաս իր դեմ հարուցած առաջին գրավոր հայցի՝ Ապահովագրվողի համար ծառայություններ իրականացնող կամ Ապահովագրվողի անունից և նրա համար ցուցակում նշված մասնագիտական գործունեություններից որևէ մեկն իրականացնող անձի թույլ տված սխալմունքի, բացթողման կամ անփույթ գործողությունների հետևանքով՝ ցուցակով սահմանված ժամկետի և պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում (և հետադարձ գործողության ժամկետի սահմաններում, եթե առկա է),

1.2 Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությամբ որևէ հայցի դեմ պաշտպանության կազմակերպման և/կամ հայցի հաստատման ծախսերն ու ծախսերը: Այնուամենայնիվ, եթե հայցի բավարարման համար պահանջվի ավելի մեծ գումար, քան սահմանված է այս պայմանագրով, Ապահովագրողի պատասխանատվության չափն այդ հայցի բավարարման մեջ կկազմի այս պայմանագրով սահմանված չափը:

### 2. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԶՈՓԸ

#### 2.1 Յուրաքանչյուր հայց.

Ապահովագրողի՝ յուրաքանչյուր հայցատուին կամ մի քանի հայցատուներին յուրաքանչյուր դեպքի համար վճարվելիք բոլոր ծախսերի և ծախսերի փոխհատուցման պատասխանատվությունը չպետք է գերազանցի գումարը, որը սահմանված է ցուցակում՝ յուրաքանչյուր հայցի համար:

#### 2.2 Հայցերի շարքի առաջացում.

Հայցերի շարքի առաջացումը կդիտվի որպես մեկ հայց, և որպես կորստի ամսաթիվ կնշվի Ապահովագրվողին գրավոր ներկայացված հայցերի շարքի առաջին հայցի ամսաթիվը:

Հայցերի շարքը կսահմանվի հետևյալ կերպ՝

- մի քանի համարժեք կամ միանման կամ մեկի պատճառով առաջացած անփույթ գործողություններ, սխալմունքներ, բացթողումներ՝ նախագծման և/կամ վերահսկման մեջ, որոնք պատճառ են հանդիսացել մեկ կամ մի քանի կառույցների վնասվածքների՝ անկախ այն բանից, թե այդ շենքը կամ շինությունը միևնույն շենքի կամ շինության նախագծերի մաս է կազմում թե ոչ, և/կամ
- միևնույն կորստի հետևանքով առաջացած մեկից ավելի սխալ գործողություններ, և/կամ
- Ապահովագրվողի և որևէ հավելյալ Ապահովագրվողի հանդեպ տեղի ունեցած հայց:

2.3 Համընդհանուր սահմանաչափ.

Ապահովագրողի՝ յուրաքանչյուր պայմանագրի ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր հայցերի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման պատասխանատվությունը չպետք է գերազանցի ցուցակում նշված համընդհանուր սահմանաչափը:

**3. ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ**

Ապահովագրողն այսուհետ մշտապես պատասխանատու է յուրաքանչյուր և ամեն հայցի այն բաժնի համար (որն այս դրույթի համաձայն կներառի Ապահովագրողի կողմից հայցի ուսումնասիրման և պաշտպանության համար կատարվող ծախսերն և ծախքերը), որը գերազանցում է Ապահովագրվողի՝ ցուցակում սահմանված մասնակցության չափը: Սույնով հասկացվում և համաձայնեցվում է, որ եթե Ապահովագրողը կատարի որևէ հավելյալ ծախս, ով ըստ այս դրույթի, հանդիսանում է Ապահովագրվողի պատասխանատուն, ապա այդ գումարն Ապահովագրողի պահանջով անմիջապես պետք է վերադարձվի Ապահովագրվողի կողմից:

**4. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այս պայմանագիրը չի հատուցի որևէ հայց կամ հայցեր, որոնք ծագել են՝

4.1 ցանկացած անփույթ գործողության, բացթողման կամ սխալմունքի հետևանքով, որը դուրս է տեղական օրենսդրությանը և էթիկական կանոնակարգին ենթակա կառավարչի և/կամ ծրագրային կառավարչի կողմից իրականացվող մասնագիտական տիպիկ գործունեության շրջանակներից,

4.2 այնպիսի ապրանքների կամ արտադրանքների արտադրության, ստեղծման, փոխանակման, վերականգնման, մատուցման կամ մշակման հետևանքով, որոնք վաճառվել, տրամադրվել կամ տարածվել են Ապահովագրվողի կողմից կամ դուրս են ցուցակում նշված գործունեության կամ պաշտոնավարման տեսակների սահմաններից, եթե նույնիսկ նույնն իրականացվում է Ապահովագրվողի կողմից՝ ցուցակում նշված գործունեությանը համապատասխան,

4.3 որևէ պայմանագրի պատճառով, որտեղ Ապահովագրվողը հանդես է գալիս որպես կառուցող, արտադրող կամ տրամադրող, անգամ եթե դա համապատասխանում է ցուցակում նշված նրա մասնագիտական գործունեությանը,

4.4 որևէ ֆինանսական կորստի հետևանքով, որը կապված չէ որևէ գույքի կամ մարմնական վնասվածքի հետ (միայն ֆինանսական կորուստ), այնուամենայնիվ, սխալ նախագծման (կամ կառուցման անբավարար վերահսկման կամ բացակայության) հետևանքով նշված օբյեկտի վիճակի վատթարացումը, թերությունը կամ վնասվածքը համարվում են գույքի վնասվածք.

- չնայած վերոնշյալին, ծածկույթ չի տրամադրվի կողմնակի ֆինանսական կորստի համար, որը գերազանցում է կոնկրետ օբյեկտի վերանորոգման միջին ծախսերը՝ այն նախատեսված վիճակին բերելու համար,

4.5 Ապահովագրվողի կողմից ապահովագրության իրականացման կամ պահպանման, ֆինանսներ կամ ֆինանսական խորհրդատվություն տրամադրելու ընթացքում թույլ տրված անփութության, բացթողման կամ սխալմունքի հետևանքով,

4.6 ֆինանսական կորստի պատճառով, որը գերազանցում է գումարի և ժամկետի սահմանները,

4.7 հայցեր, որոնք ծագել են որևէ գործարանի կամ սարքավորման արտադրականության կամ արդյունավետության կամ արտադրանքների որակի և քանակի անբավարարության, շահույթի կորստի, կիրառման հետ կապված կորստի պատճառով տեղի ունեցած ֆինանսական կորուստներից,

4.8 գծագրերի, նախագծերի, չափագրումների կամ ցուցակների վերստուգման կամ վերակազմման ծախսերը՝ կապված ներքոհիշյալ հատուցված հայցի հետևանքների հետ. այս բացառությունն այնուամենայնիվ չի վերաբերում հաճախորդի կողմից ներկայացված հայցերի ծախսերին,

4.9 արտոնագրերի /պատենտի/, հեղինակային իրավունքի, ապրանքների անվանման, ապրանքանիշերի, գրանցված նախագծի կամ արտոնագրերի բաշխման խախտումը

4.10 փաստաթղթերի (անկախ բնույթից՝ ձեռագիր, տպագիր կամ վերատպված որևէ այլ տարբերակով), կամ համակարգչային/էլեկտրոնային ձևով պահպանված ինֆորմացիայի կամ նյութական գույքի կորստի հետևանքով, որոնք կորսվել կամ ոչնչացվել են Ապահովագրվողին վստահված, նրա հոգածությանը կամ ղեկավարությանը հանձնված լինելու ընթացքում,

4.11 գրպարտանք և չարախտություն,

4.12 դրամի հաշվարկի ձախողման հետևանքով ծագած հայցեր,

4.13 Ապահովագրվողի կողմից պայմանագրի կամ որևէ այլ համաձայնագրի կամ երաշխավորագրի միջոցով սահմանված պատասխանատվության հետևանքով, որոնց պատճառով լայնամուտ է Ապահովագրվողի իրավական պատասխանատվության սահմանաչափը,

4.14 Ապահովագրվողի կամ նրա աշխատակիցների կողմից կանխանտածված, անագնիվ, չարամիտ, հանցագործ կամ անօրինական գործողության հետևանքով Ապահովագրվողի դեմ հարուցած հայցերի պատճառով,

4.15 Ապահովագրվողի հետ ծառայությունների մատուցման կամ ուսուցման պայմանագիր կնքած Աշխատակցի պատճառած մարմնական վնասվածքի հետևանքով՝ նրա աշխատանքային գործունեության ընթացքում և արդյունքում,

4.16 Ապահովագրվողի կողմից կամ անունից շարժական կամ անշարժ գույքի, ջրային կամ օդային փոխադրամիջոցի կամ ավտոմեքենայի տնօրինության, օգտագործման կամ վարձակալության ընթացքում,

4.17 հողի, ջրի, օդի աղտոտման հետևանքով կամ անմիջականորեն/ միջնորդավորված դրանցով պայմանավորված ցանկացած բնույթի պատասխանատվությունից,

4.18 ցանկացած գույքի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման կամ դրանից բխող կամ դրան հաջորդող կորուստների կամ ծախսերի կամ ցանկացած բնույթի պատասխանատվության հետևանքով, որն անմիջականորեն կամ միջնորդավորված կերպով ծագել կամ պայմանավորվել է հետևյալով.

- իոնիզացնող ճառագայթումների կամ որևէ ատոմային նյութի կամ դրա մնացուկի պատճառով աղտոտվածության հետևանքով,

- որևէ պայթուցիկ կամ ատոմային տարր պարունակող ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր գույք,

4.19 ասբեստոզից կամ հարակից որևէ հիվանդությունից (ներառյալ քաղցկեղը) բխող պատասխանատվության հետևանքով, որն առաջացել է ասբեստոզ կամ ասբեստոզ պարունակող արտադրանքների առկայության, արտադրության, դրանց հետ շփման, վերամշակման, վաճառքի, տարածման, պահեստավորման, պահպանման կամ կիրառման հետևանքով,

4.20 որևէ պատերազմի, հարձակման, թշնամական գործողությունների (անկախ այն բանից՝ հայտարարված է պատերազմը, թե ոչ), քաղաքացիական պատերազմների, ահաբեկչության, ընդհարումների, զինված բախումների կամ հեղաշրջման հետևանքով,

4.21 ֆորս մաժորային պատասխանատվության հետևանքով (օրինակ, բայց ոչ միայն՝ երկրաշարժ և փոթորիկ),

4.22 այս պայմանագրի ներքո Ապահովագրվող անձանց կողմից մեկը մյուսի հանդեպ կամ մեկի կողմից ներկայացված հայցերի հետևանքով,

- որը միջնորդավորված կերպով կամ անմիջականորեն տնօրինվում է, ղեկավարվում, գործում կամ կառավարվում Ապահովագրվողի կողմից,
- որում Ապահովագրվողը գործընկեր է, խորհրդատու կամ աշխատակից,

4.23 տուգանքային կամ պատժամիջոցային կամ փոխհատուցման և ընդլայնման հետ կապված վնասների հետևանքով:

## 5. ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այս պայմանագիրը, ցուցակը և հետագայում դրանց կցվող ցանկացած հավելված համարվում են մեկ ամբողջական փաստաթուղթ, և դրանցից յուրաքանչյուրում հանդիպած որևէ բառ կամ արտահայտություն, որը կրում է յուրահատուկ իմաստ, ամենուր պետք է ներկայացնի միևնույն բովանդակությունը.

5.1 Որևէ իրադեպի կամ այս պայմանագրով սահմանված հայցի ծագման համար հնարավոր հինք հանդիսացող հանգամանքի առկայության դեպքում Ապահովագրվողը պետք է այդ մասին շտապ գրավոր տեղեկություն ներկայացնի Ապահովագրողին: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո 30 օրվանից ոչ ուշ քան տեղեկության ներկայացման դեպքում ցանկացած հայց, որի ծագմանը նպաստող հանգամանքը կարող է առաջացած լինել ցուցակում նշված ժամկետի ավարտից հետո 36 ամիսների ընթացքում, կհամարվի այս պայմանագրին և նրա գործողության ժամկետին համապատասխան:

5.2 Ապահովագրվողը չպետք է պատասխանատվություն կրի կամ հաստատի/կատարի այստեղ նշված պատասխանատվությանը վերաբերող որևէ հայցի հետ կապված վճարումներ կամ դրան առնչվող ծախսեր և ծախսեր՝ առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության, ով լիզորված կլինի Ապահովագրվողի անունից ձեռնարկել և ղեկավարել նման հայցի դեմ պաշտպանությունը կամ հայցի հաստատումը, ինչի նպատակով Ապահովագրվողը պետք է տրամադրի բոլոր տեղեկություններն ու աջակցություն, որն Ապահովագրողը կպահանջի ողջամտորեն:

Ապահովագրողը չպետք է հաստատի որևէ հայց՝ առանց Ապահովագրողի համաձայնության: Եթե Ապահովագրվողն այնուամենայիվ մերժի Ապահովագրողի

առաջարկած կարգավորման տարբերակը և որոշի հակադրվել կամ շարունակել իրավական գործընթացները, ապա Ապահովագրողի պատասխանատվու - թյունը չի գերազանցի այն գումարի չափը, որքան հայցը կարող էր պահանջել՝ ներառյալ կողմերի միջև մինչև անհամաձայնությունը նրանց պայմանավորված ծախսերի և ծախքերի չափը:

5.3 Եթե ցուցակում նշված է հետադարձ ամսաթիվ, այս պայմանագիրը չի գործի այն հայցերի դեպքում, որոնք պատահել են Ապահովագրողի հետ կամ կողմից՝ անփույթ գործողության, բացթողման, սխալմունքի հետևանքով, կամ եղել են պատահելու ենթակա՝ նշված հետադարձ ամսաթվից առաջ:

5.4 Ապահովագրվողը պետք է՝

- նշտապես պահպանի բոլոր մասնագիտական ծառայությունների ճշգրիտ տվյալները, որոնք հնարավոր կլինի զննել և օգտագործել Ապահովագրողի կամ նրա ներկայացուցիչների կողմից՝ որքան դրանք վերաբերում են սահմանված որևէ հայցի.
- տրամադրի Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին այնպիսի ինֆորմացիա, աջակցություն և ստորագրված փաստաթղթեր, որոնք կպահանջի Ապահովագրողը, և
- չներժի հայցի դեմ պաշտպանության հարցում օգնել Ապահովագրողին,

5.5 Ապահովագրողի և Ապահովագրվողի միջև ցանկացած անհամաձայնության առկայության դեպքում այս պայմանագիրը կառաջնորդվի ցուցակում նշված երկրի օրենսդրությամբ, միայն որի դատարանները իրավասություն կունենան ծագած անհամաձայնության լուծման հարցում:

5.6 Մույնով համաձայնեցվում է, որ հայցի դեպքում վճարում կատարելու դեպքում հայցի փոխհատուցման հետ կապված Ապահովագրվողի բոլոր իրավունքները փոխանցվում են Ապահովագրողին:

5.7 Եթե Ապահովագրվողն ունենա որևէ հայց՝ իմանալով հանդերձ, որ այն կեղծ է գումարի կամ որևէ այլ առումով, այս ապահովագրությունը կդառնա անգործադրելի և հետագա բոլոր հայցերը կմերժվեն:

5.8 Այս ապահովագրությունը չի գործում այլ ապահովագրության հետ մեկտեղ, և կհատուցի սահմանված հայցերը միայն եթե առկա չէ որևէ այլ ապահովագրություն:

5.9 Այս պայմանագրով տրամադրվող պատասխանատվությունը սահմանափակված է հետևյալ առումներով՝

ա) ցուցակում նշված տարածքում գտնվող դատարանի արդարադատությամբ պահանջվող հատուցում,

բ) ցուցակում նշված տարածքում պատահած և փոխհատուցվող ծախսեր և իրավական ծախքեր:

5.10 Կասեցման վերաբերյալ տեղական իրավական կարգավորման բացակայության դեպքում այս ապահովագրությունը կարող է կասեցվել Ապահովագրվողի կողմից ցանկացած ժամանակ՝ Ապահովագրողին գրավոր տեղեկացնելու միջոցով: Այս

ապահովագրությունը կարող է կասեցվել նաև Ապահովագրողի կողմից կամ անունից՝ գրանցված, հաստատագրված կամ այլ առաջնակարգ փոստային միջոցով՝ ցուցակում նշված Ապահովագրվողի հասցեով գրավոր տեղեկություն ուղարկելու դեպքում, որից հետո 30 օրից ոչ շուտ, կասեցումը տեղի կունենա: Նման գրավոր տեղեկության ուղարկումը կլինի բավարար փաստարկ, և պայմանագիրը կկասեցվի գրավոր տեղեկության մեջ նշված օրը և ժամին:

5.11 Եթե այս ապահովագրությունը կասեցվում է Ապահովագրվողի կողմից, Ապահովագրողը պարտավոր է վերադարձնել այստեղ նշված պարգևի միջին սովորական սակագինը:

Եթե այս ապահովագրությունը կասեցվում է Ապահովագրվողի կողմից կամ անունից՝ որևէ պատճառով, բացի պարգևի չվճարումից և ապահովագրության պայմաններից որևէ մեկի խախտումից, ապա Ապահովագրողը պարտավոր է Ապահովագրվողին վերադարձնել համամասնականորեն հաշվարկված պարգևի չափաբաժինը:

5.12 Ապահովագրողի կողմից վճարումը կամ հավելավճարը կամ չվաստակված պարգևը նախապայման չի հանդիսանա կասեցման պատճառաբանության համար, սակայն նման վճարումը պետք է կատարվի հնարավորինս շուտ:

Եթե գրառմանն առնչվող սահմանափակման ժամկետը խախտված է կամ չեղյալ հայտարարված որևէ օրինապահ ղեկավարության կողմից, այդ շրջանը կճշգրտվի՝ հավասարվելու համար նման օրենքի թույլատրության սահմաններում առկա նվազագույն սահմանափակմանը: